

ՓՈՒՆՁ

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Խաղաղի օգիտ

Մարդկային ազգին շինութեան ու բարեկեցութեան համար բնութեան կողմանէ չհորհուած երկաթը որ մահացու դժոխային դարձիքներու փոխուած, կէս աարիէ հետէ երկու մեծ ու կիրթ ազգայ կործանման ու խտտակեցութեան համար կործանածու էր չարաչար - Ի մեծ գոհութիւն աշխարհի՝ յանակնկալու դարաւոր առաւ իւր մահացան հարուածներէն :

Հեռագրական թելերը՝ երկուշարժի օրէն հետէ հրացանի ու շնորհաբանի մարդագոհներու եւ հարուածոց աղետաւի գոյժեր առէ դարբեցան :

Գերմանիոյ եւ Գաղղիոյ կատարութիւնը որ մարդկային բանականութեան համար ամենամեծ նախասինք մ'էր, - վերջապէս մեղմելով 21 աւուր գինագագար մը ստորագրեցին, հետեւեալ պայմաններով :

1- Ձինադադարը կսկսի յուն . 17 ին եւ կվերջանայ վետր . 7 ին :

2- Փարիզացիք 200 միլիոն Ֆրանկ պատերազմական ծախք պիտի վճարեն Գերմանիոյ՝ 1/4 աւուր մէջ, զինադադարի առաջին օրէն սկսեալ :

3- Գերմանական զօրքը Փարիզի շրջակայ բերդերուն ու ամրութեանց մէջ բնակի, երբէք քաղաքը չմոտելով :

4- Փարիզացիք միայն 13 օրուան համար պաշար առնելու թոյլտուութիւն ունենան :

5- Փարիզի դադղիական բանակը զէնքերէն զրկուով քաղաքին մէջ մնայ երբեւ պատերազմական դերի :

6- Ձինադադարի օրերուն մէջ, Գաղղիոյ այլ եւ այլ կողմերէն երեսփոխաններ Պորտօի մէջ ժողով կազմելով, խորհրդակցին Գերմանիոյ այն յամառ պահանջման վրայ, որով Ալգանն ու Լօրէնը իւրացունել կուզէ :

Ահա ասանք են գլխաւոր դաշինքն, Բաղդը չարաչար հարածելով դադղիացիները անոնց բոլոր ջանքերն ու ճիգերն ի դերեւ հանեց, եւ ասկէց չորս ամիս յառաջ, բերդաքար մ'ու հողակաշտ մը անդամ չեմք տար, պոռացողներուն պարագլուխները վերջապէս բռնադատեցան այսպէս զիջում ընելու :

Գերմանացոյն կինայ յաջողութեան ու վառաց վերին ամեղուղքներէն խոնարհամտութեամբ նայիլ վաճ դադղիացոյն վրայ, եւ խտտապարանոց չգրտնուիլ աշխարհի յաւիտեան արհամարհանաց եւ խաղաղասէր մարդկան մշտնջենաւոր աստելութեան ենթակայ չըլլալու համար :

Արդ՝ կինայ հեռագրի թելով գիտել թէ Գաղղիոյ սահմանագիր ժողովէն ինչ գարտ պիտի երնէ . Գերմանիան գոհ ընելով հաշտութիւն, թէ չարունակութիւն պատերազմի : Սահմանագիրք եւ թէ այս վերջինը բնորէն, ըստ մեզ՝ Գաղղիոյ ներկայ ստեղծի թշուառութեանց վրայ նորանոր թշուառութիւններ ալ պիտի աւելնան, քանի որ՝ գրեթէ ամեն զօրութիւն խորաստիւծ է, եւ երկպառակութիւնն ու անխաբանութիւնը սիրած ըլլալով՝ կարի դժուարիէ նոր զօրութիւններ գումարել : Հաշտութիւնն ու խաղաղութիւնը արդարեւ Գերմանիոյ համար ալ պէտք է, որովհետեւ Գերմանացիք ալ չարաչար մնասուած ըլլալով պատերազմին անակնկալ երկարատեւութեան պատճառաւ՝ չարունակ յայլութեանց աւետիաներն եւ մինչեւ իսկ Փարիզի անհարին համարուած անձնատուութիւնը իրենց աչքին չերեւար սակայն՝ Գաղղիոյ փրճակը վատթարագոյն ըլլալով, խաղաղութիւնը չանհրաժեշտ է առաւել Գաղղիոյ համար : Այո՛, Գաղղիա այժմ՝ խաղաղութեան պէտք ունի . որովհետեւ՝ իւր կատարական յեղափոխութենէն հետէ սահմանագրական ժողովուրդոց համակրութենէն զատ ոչինչ ունեցաւ : Անդղիա եւ Աւստրիա իրենց չեղքը դիրքէն մազիւ չափ չեղած չեն, եւ եթէ մէկը միւսին կամայլք հաշտութեան միջամտութիւն ընել առաջարկեն՝ « պատերազմը ազգերը միջամտութիւն չեն բնդուելիր » եւ կամ « ժամանակը եկած չէ » պատասխանը կուտան, Բուսիոյ ընթացքը յայտնի է : Աղեկանագրը կայրը կիցսը կինայ համար հանդիսաւոր կերպիւ իւր աւադանւոյն եւ օտար մեծամեծաց առջեւ բաժակ կառաջարկէ Փարիզի ուսակոծութեան յաջողութեան հեռագիրը իւր մատանց դպչելուն պէս :

Կառավարութեանց այս վիճակը՝ որ բոլորովին չեղքութիւն թարգմանել հնարին չէ, ի հարկէ ուշադրութեան առած են բաղդահարած դադղիացիք, եւ կորսնէն թէ հաշտութիւն ընել պէտք է իրենց փրկութեան համար, պատուոյ եւ անխառնութեանց ու զրկանաց հաշիւները յարմար աւթի թողլով :

Բրուսօ-գաղղիական պատերազմին անակնկալ դադարումն, Սեւ-ժովու ինդրոյն դեպքանաժողովին այս շարժութու գումարման ետ մնալուն պատճառեղաւ : Ժիւլ-Փաւր չկրնար Գաղղիան ձգել եւ Լոնտոն անցնիլ . որովհետեւ կարելի է որ իւր սուրը բոցերու մէջ գանուող մէկը օտարին օգնելու եր-

թայ : Նոր հեռագրի մը նայելով՝ երեկ պիտի ըլլար երբոք նեաւոր, բայց մեզի հաւանական չթախր, փասն զի այս օրերս բոլոր կառավարութիւնները իրենց խորին աշտարայութիւնը Բրուսօ-գաղղիական մեծ խնդրոյն վրայ դարձուցած են :

Բուսիա իսկ՝ որ Սեւ-ժովու ինդրոյն հեղինակն է, այս օրերս այնպիսի լուսթիւն մը կպահէ, որ կարծես թէ ինքը չէ ինչ իրն յարուցանողը կամ իւր ծանուցող իրը ետ առած եւ ետ կեցած է :

Այսու ամենայնիւ, յայտնի է թէ այս ինքիքը կայ, եւ ուշ կամ կանուխ պիտի յաղուի : Երանի թէ խաղաղութեամբ վերջանայ :

Բուսիանից եւ Սերվիոյ իշխանութեանց կողմանէ ինչիք եղեր է, որ մէկ մէկ պաշտօնակալ ներկայ գտնուին Լոնտոնի դեպքանաժողովին, քանի մը յայտարարութիւններ ընելու համար, բայց դեռ պանաժողովին անդամաց կողմանէ մերժուեր է :

300 հարգելի անհիւստի քննարկ

Անդղիական լրագիր մը հրատարակեր է թէ՛ ներկայ պատերազմին վախճանէն անմիջապէս յետոյ, զ Գերմանացիք 300 հազար զօրքով Անդղիա պիտի յարձակին, պատճառելով թէ Անդղիոյ կառավարութիւնը պատերազմին ատեն թէ եւ ի վերին երեսս չեղքութիւն կեղծեց, բայց ի ներքուս օգնեց Գաղղիոյ՝ շէնք ու փոխ ստակ տալով : - Պէրլինի լրագիրը կատակաբար կրատասխանէ այս հրատարակութեան, ըսելով թէ՛ արդեօք Գերմանական բոլոր զօրքը չեղքական կերպով լողացնո՞ւն որ կատող ըլլան Պալմիկ ժոմբ անցնիլ եւ Անդղիոյ վրայ թափիլ . կամ թէ՛ թեւեռուն ռակը մէկմէկ դուռ՝ կապելով պիտի յղան, եւ կամ՝ ներքնաժողովան ճամայ մը շինուելով անկէ՞ց պիտի փոխաբուին : - Յետոյ կ'յառելու թէ՛ ենթադրենք որ այս հնարուոր ըլլայ . բայց դէտք եղած թնդանոթներն ու հրացանները օգին վրայէն թուցունելով Անդղիա պիտի անցունենք : - Ի վերջոյ չը կարծէր որ անդղիացիք այսպիսի տարաձայնութեանց միտ դնեն կամ կարեւորութիւն տան, որոնք կ'հնարուին ուրիշ նպատակի համար չէ, այլ՝ Գերմանացուց ու անդղիացուց մէջ եղած բարեկամութիւնը նուազեցունելու համար, կըսէ :

Արդարեւ հակակրութիւնն այսպէս շատ հնարքներ կ'թափէ, դիմացինին միտս հասցունելու դիմամբ :

Ա Ղ Գ Ա Յ Ի Ն

Քաղաքական ժողովն, երեք շաբաթի աւար ստորախնայն նկատեն զառ, երեկ ալ գումարեցաւ :

Գերապատիւ Երեմիա Եպիսկոպոսը որ երկու շաբաթ յառաջ Քաղաքական ժողովին խորհրդարանը մտնելով անվայել կերպիւ յարձակում ըրած էր Քաղաքական պատկառելի ժողովին եւ Գաւառ-քեան տար մեծապատիւ Ալիքսան Էֆենտիի պատուոյն գէժ, - երեկ ներկայացեր եւ ներում խնդրեցէ, անշուշտ զըջալով ըրածին վրայ :

Վերջացած խնդիր մը զրգում չըլլալու մասը, չեմք ուզեր պատմել յարձակման պատճառն ու պարագաները, այլ մեր շնորհակալութիւնները կրնաւ ցանկնք գերապատիւ Երեմիա Եպիսկոպոսին՝ որ իւր պակասութիւնը ճանչնալով, խոնարհամտութեամբ զիջում ըրեր եւ ներում խնդրել վտւթացեր է, Երբին գերապատուութիւնը հարկաւ ի խղճէ կխոտտովանի թէ՛ Քաղաքական ժողովն անդամ մեծապատիւ Էֆենտիին լաւեւնոյն յարգանաց արժանի են, եւ թէ՛ իրենց ազգային պաշտօնը անշահագէտ ողբով կովարեն յօգուտ ազգին, կարելի եղած միջոցներն ի գործ գնելով :

Պաղայեան մեծապատիւ Ալեկսան Էֆենտիի դալով մեր դավտաններուն պէտք չկայ, շատերը կվիպեն անոր հազուադիւր բարեմասնութեանց : Ժամ է բազմաթիւ Պաղայեան Էֆենտիի նախորդները, բայց մենք զանց կընենք որպէս զի մի գուցէ վերաւորենք զինքը . . . սակայն՝ անհրաժեշտ պարտ կը համարվիք մեզ, յորդոր կարգալ շղագէտներու դասուն որ ճանչնան Ալեկսան Էֆենտիին արժանիքը :

Ոմանք կուզեն եղեր որ Պատրիարքարանը իրեն յատուկ վաստակն մը ունենայ : Ազգային կառավարութեան համար եթէ վաստակն մը պէտք կայ, ահաւասիկ Ալեկսան Էֆենտիին ունինք : Գիտէ կայսերական կառավարութեան օրէնքները, գիտէ խնդիր մը ներկայացունելու եւ խօսելու եղանակը :

— Առաջիկայ երեք շաբաթի օրը Քաղաքական ժողովն ու Ընդհանուր ժողովոյ Գաւառական Մասնաժողովն մէկտեղ նիստ պիտի ընեն, մասնաժողովին հրաւիրմամբն :

— Քաղաքական ժողովն առաջիկայ ամսոյն վերջն իւր տեղեկագիրն ու հրաժարականը Երեմիականական ժողովին մատուցանելու մտադիր է :

Ընդհանուր ժողովոյ առաջիկայ նըստին մէջ Քաղաքական ժողովոյ կողմանէ պիտի առաջարկուի եղեր, խնդրոց կարգն անցունել ընդհանուր աւարքի մը հաստատութեան խնդիրը :

Պատրիարքարանը նոր անօրինութիւններ ըրաւ Նիկոմիդիոյ վիճակին համար : Փոխառաջնորդ Նիկոլայոս եւ պիսկոպոսը որուն վրայ երկար ժամանակէ հետէ եղած գանգատներուն չափըն անցած է, վերջապէս ձգուելով իւր

պաշտօնէն՝ մոյրաբարդա կանչուած է : Իսկ Արմաշի վանահայր գերապատիւ Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոսին գրում է որ Նիկոմիդիոյ իջնելով ազգային Մահմանադրութիւնը գործադրէ վիճակին մէջ եւ օրինաւոր կերպիւ Առաջնորդի մը ընտրութիւն ընել տայ :

Փիրղալէեան Ղեւոնդ վարդապետն ալ Եասագճիի մը հետ գրկուած է, հաշուոց վերաբերեալ խնդրոց կարգադրութեան պաշտօնով :

Խմբագիր

Տրագիրդն 18 յունվար 1871

Պատուական լրագրոյց մէջ տեղւոյս ազգային գործոց ախուր կացութեան վրայ անաչառ լեզուով խօսած աստեղութեւ կանխաւ գիտէի որ ճամբարութեան ձայնը խիստ եւ անսխալ պիտի գար սիրելի հայրենակցայոս, սակայն կը յուսայի որ իրենց բարոյական վիճակին տկար կողմերը ակներեւ աստեղով վերկարգ ազգայնութեամբ մը կը փութան ասանց անմիջական եւ ազդու գործուն մատուցանել եւ անյողող հաստատութեան վերածելով կը ջանան իրենց գիրքով եւ յառաջախնական արամադրութեամբը նախանձելի տիպար մը հանդիսանալ ուրիշ գաւառաբնակ հայերու :

Ահա այս էր մեր նպատակը եւ շարժառիթը որ քանի մը խօսքով ճշգրտել : Հեռի մեզմէ ամբողջ քաղաքի մը պատուարժան հայ հասարակութիւնը անպատուելու դիտաւորութիւնն զըր մեր հակառակորդները մեզ վերադրել կուզեն մեր յօդուածին դէմ :

Դեռ չեմ գիտեր թէ նախընթաց յօդուածն առաջագրեալ նպատակիս գործադրութեանը պիտի նպաստէ թէ ոչ, սակայն քահանայները ու միապետները վրդովեց չարամտութիւնը քմակարկաւ մեկնութեամբ յօդուածին մէջ ամբողջ եկեղեցական դասուն եւ ժողովրդեան մը դէմ թշտամանք տեսնելով ջանաց յողել հասարակութիւնը քահանայից բողոքագիր մը ստորագրեցին առ Ս. Պատրիարքն ուղղեալ որ զպաշտօնապէս ալ հրատարակուեցաւ Մամուլի եւ Օրագրի մէջ :

Սակայն ներուէ մեզ գիտել տալ յիշեալ արժանապատիւ հարց թէ նախ մեր գրութեան պատասխանելու իրաւունքը իրենց չէր պատկանէր որովհետեւ իրենց դէմ դիտողութիւն մ'ըրած չէինք, Բայրեաւարանի արժանի լեզուով գրուած բողոքագիրը ստորագրելով յիշեալ քահանայք իրենց բարոյական զգայմանցը վրայ նպատաւոր դադար մը չտուին աշխարհի առջեւ : Կերեւայ թէ բողոքագրին հեղինակները իշխոյէ փաստի իրենց բողոք աշխատութիւնը նուիրած են լուսանք եւ հայհոյութիւն ժայթքելու մեր վրայ եւ զգացած կիրքերն այն պիտի նախատական բառերով արտայայտած են որք ոչ թէ իրենց բարոյական առաքնութեամբը ժողովրդին օրինակ

բլլալու կաշտ Եկեղեցականներու դրութեան մէջ այլ պարկեշտ քաղաքացիի մը բերնին մէջ անդամ անվայել եւ զայնմ ազգական են :

Յիշեալ բողոքագրին սճին եւ լեզուին վրայ այս համառօտ գիտալով թիւնը ընելէ վերջը կանչնինք խնդրոյն ըուն եւ հական կէտին :

Մեր նախնոցայ յօդուածովը մեղադրած էինք մեր հայրենակիցներն իրենց փոխախառնութեան եւ անարարելութեանը համար եւ իրրեւ մեր ըսածներուն ապացոյց տեղւոյս ազգային հաստատութեանց անխնամ եւ յարստօրէի վիճակը յառաջ բերած էինք : Քահանայից բողոքագիրը մեր ապացոյցները հերքելէ շատ հեռու է, եւ քանի որ վարժարանը վանքը ընթերցարանը եւ խօսարանը իրենց արդի ցաւալի վիճակին մէջ նման եւ չկարենան պատասխանել ժողովրդին բարոյական բխողիցը քանի որ այդ հաստատութիւնները անբաւարար կանգնին մեր տխուր յայտարարութեանց ստուգութեանը, մեր նախորդ յօդուածին պարունակութիւնը անհերքելի կմնայ, վասն զի հայհոյել որեւէ առարկութիւն մը ժխտել ըսել չէ :

Յիշեալ արժանապատիւ հայրերը ինչ պիտի պատասխանեն մեզ եթէ հարցնենք իրենց թէ Ս. Պատրիարքը կ'Պօլիս երթալու համար Տրագիրդն հանդիպած միջոցին եւ արդի գերապատիւ վոյա առաջնորդը իր պաշտաման ձեռնարկած օրերը եկեղեցեաց բեմերէն յանդիմանութիւններ չուղղեցին Պոստոսարեանկ հայերուն մեր նշանակած պակասութեանցը համար : Եւ միթէ անոնք մեր գի պէս զորոհեանք քաղաքիս անհոյս սարսափեցին . . . :

Չարմանալին այն է որ այդ քահանայները տեղւոյս Արժանապատիւ Տ. Բարթոլոմէոսին վրայ փունջի նոյն թուուով հրատարակեալ խմբագրական քանի մը դուրեւտի տողերէն իրենց անձնասիրութիւնը վերաւորեալ տեսնելով սաստիկ զայրացեր եւ այն տողերուն հեղինակութիւնն ալ մեզ ընծայելով պարագտեղը կղտկնին հոգնեցուցեր, եւ իրենց պաշտօնակցին արժանեացը դէմ մեղանշեր են :

Աւելորդ է լսել որ փունջի մեծ խումբ բողոքին այդ դուրեւտը գրած է ի քաջալերութիւն յիշեալ առաքնադարձ քահանային Պոստոսի արժանահաւատ անձանց գլխաւոր վկայութեանը յինքով :

Այս առթիւ Սիրելի հայրենակցայոս ազգասիրական եւ պատուոյ զգացմանցը անկեղծաբար հրաւեր կարգալով կինդրեմ որ ամեն յոսի կիրք ի բաց վանելով մեր սրտէն աշխատինք ներդաշնակաւոր համաձայնութեամբ մեր ազգային հաստատութեանց անեական բարուք մատակարարութիւն մը տալ առանց բան մը ակնկալելու մեզ առաջ նորդելու պաշտօն ունեցող կղերէն, որ ինքզինքն իսկ բարուքելու անկարող կը գտնուի դժբաղտարար :

Փափաքելով որ . . . Խմբագիր

ներկայս պատուական լրագրոյդ մէջ ըն-
գունելու չնորհն ընէք :

Մնամ

Չեղ բարեացարարս

Տրւեալս

ՊԵՏՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ

Ազգ. վարչութիւնը ասկէ առաջ Սե-
բաստիոյ վիճակին երկարատեւութեան
խնդիրն կարգի դնելու համար երկու
կողմէն լիազօր պատճառութեամբ մէկ մէկ
մասնամասերով ընտրել առաւել եւ որչափ
էր որ անոնց համաձայնութեամբ պարտ
ու պատշաճ անօրէնութիւնն իրարմ գր-
ուի : Ենթիւ այս անդամիւր վերջնական
լուծումն ստանալով, որոշուեցաւ որ
Ս.Պ.Պ. Սահմանագրութիւնը Սեբաստիոյ
մէջ գործադրուելու եւ օրինուող դա-
ւառական ընդհանուր ժողով կազմուե-
լով նոր առաջնորդի մը ընտրութիւնը
նոյն գաւառական ժողովին միջոցա-
բառ Սահմանագրութեան կատարուելու
համար Ս.Պ.Պ. Պատրիարքարանի կողմէն
յատուկ հրահանգ աւելցուցական աւե-
սուէ մը պիտի : այս պայմանաւ որ գա-
ւոյց սեռաւոր առաջնորդ ընտրութեան
մէջ առաջնորդական ընտրելի չ'կրնայ
ըլլալ :

Սեբաստացւոց երկու մասնամասերով
ներն այս վերջնական որոշումը համա-
ձայնութեամբ ընդունած ըլլալով վար-
չութիւնը այն պաշտօնական ծանուց-
մամբ կը վերածայ հրատարակել թէ յիշ-
եալ կարգադրութեան համաձայն Սե-
բաստիոյ առաջնորդական խնդիրն լուծ-
ուելու համար տեսուչն քիչ օրէն Սե-
բաստիոյ հանելով Ս.Պ.Պ. Սահմանա-
գրութիւնը վաղ ընդ վայթ դաւառին մէջ
իզօրմ գրուելու մասին պարտու պատ-
շաճն անմիջապէս պիտի անօրինուի :

16 Յունիս 1871

Ա.Պ.Պ. Պատր. Հայոց
Ի. Կ. Պօլս

Ի Ա Ռ Ն Լ ՈՒ Ր Ե Ր

Կտուի թէ՛ օգոստոսիաւ Սուլթանը
չնորհաւորեր է Բրուսիոյ Կիլոմ թագա-
ւորը, Կայսր հրատարակուելուն համար :

—Յունաստանի կառավարութիւնը
ազգային ժողովին կառավարելի եղեր, որ
10000 անդակական լիրա տրուի՝ անցեալ
ները աւազակաց կողմանէ սպանեալ Պ.
Լոյս անդակացին տիրնովը :

—Այս տարի Ռուսիոյ մէջ տեղ տեղ
այնչափ սաստիկ ցուրտ կայ, որ մինչեւ
մէկ տունէն դիմացի տունը երթեւեկել
անհնար կըլլայ :

—Կարիսթալի զօրտակեալ որ՝ դեր-
մանացւոց գեմ պատերազմելու համար
Գաղղիա անցած եւ կամուսրաց հրամա-
նատար եղած էր, — Իւր եկած տեղը այ-
սինքն Գաղղիա կողմն պիտի գառնայ,
կըսէ հեռագիր մը :

—Այս շաբթուս սկիզբները հեռագրի
մը ցաւք իմացանք թէ՛ Իզմիրի մէկ մու-
սըլթանայ եղեր է, Սէլէս գետին յորդե-
լուն պատճառաւ, քակայն մինչեւ այս

առաւ. օտ մանրամասն տեղեկութիւններ
չկրնանք ստանալ :

—Խոսք կայ թէ՛ Հոսմ օրտի գաւ-
նայ. Հոսմէական ազգայնոց խնդրոյն
կարգադրութեան համար բաւական ժա-
մանակէ հեռէ մոյսաբազարս գանուող
Մ. Բիլիթմ, վերջին օրերս գեր. Հատուն-
եանի եւ սարմէջ անհամաձայնութիւն
մ'երեւան եղած ըլլալով :

—Ամերիկայի մէջ եղած վերջին աշ-
խարհագրութեան մը նայելով բոլոր երկ-
րին բնակչաց թիւն է 39 միլիոն, 100 միլ
100 միլ ըլլալով : Հաշիւ եղած է թէ՛
100 միլ 22 կաւեխոյ բնակչաց թիւն, եւ
թէ՛ այս հաշուով 1900 միլ 73 միլիոն բը-
նակիչ պիտի դանուի Ամերիկա :

—Այս շաբթուս Խոսիւրտարի Սէլա-
միցիթի թողը երկու հրդեհի գեղարդ պա-
տահեցան, բայց բարեբաղդարար ա-
ռանց զիտու :

—Փարիզի անձնատուութեան լուրը
մոյսաբազարս համեմուտն պէս, Բրու-
սիոյ դեսպանատունը եւ բրուսիացիք
ւերթալութեան հանդէսներ կատարելին :

—Բառու գանուող գաղղիական հը-
պատակները սիսեր եւ մէջերնին ստակ
ժողովը պատերազմին մէջ վիրավորեալ
Գաղղիացւոց օգնութեան համար, եւ
մինչեւ հիմա ժողովուած 2000 ֆրանցը
Գաղղիա դրեր են :

—Շատ ժամանակէ հեռէ մոյրաբա-
ղ. քիս անդակական դեսպանատան ա-
ռաջին թարգմանութեան պաշտօնը վա-
րդ անուանի Պ. Ֆրէտէրիք Բիլլանի իւր
խոր ծերութեան մէջ այս օրերս վաղ-
ճանած ըլլալով մեծ հանգիստ կատար-
ուեցաւ յուզարկաւորութեան հանդէսը
ի ներկայութեան հիւպատոսայ, թարգ-
մանաց եւ ուրիշ բաղնալիւ երեւելի ան-
ձանց :

—Սեբաստիոյ շուկային մէջ հրդեհ
պատահելով բաւական վնասուց պատ-
ճառ եղեր է ազգային ու օտարազգի
խանութներու համար : Տակաւին ման-
րամասն տեղեկութիւն չունինք մենք :
Կըսուի թէ տեղական կառավարութիւ-
նը կուզէ եղեր վար առնել հրդեհին
պատահած շուկան, ներութեանն ու
անշքութեանն համար, բայց հոսարա-
կաց կողմանէ ընդդիմութիւն տեսնուել
է. սուտի կարծող կայ թէ դիմամբ
եղած ըլլայ, բայց մենք չենք կրնար
այս կարծիքն ունենալ :

—Գաղղիոյ կառավարութիւնը որո-
շեր է թոշակ տալ Փարիզի օմբակսու-
թեան ատեն ասոյին անդին մեծնող
մարդոց ընտանեաց, ըստ վիճակորական
կանոնաց :

—Ռուսիոյ Աղեկասնոյ կայսեր հրա-
մանաւ հաստատուած վիճակորական նոր
կարգադրութեան համաձայն, Ռուսիոյ
բնակիչներէն 21 տարեկանէն սկսելով
զօրք պիտի առնուի այսուհետեւ՝ ա-
ռանց երբէք դրամական ու անձնական
փոխարկութիւն ընդունելու : — Իսկ
մարմնական կազմուածի պատճառաւ
զինուորութեան անյարմար եղողները,
զինուորութեան վերաբերեալ պաշտօն-
ներու մէջ պիտի դործածուին : — Կամա-

ւոր պիտի ընդունուին 17 տարեկանէն
սկսեալ անձինք :

—Գաղղի շողենուր անցեալ եր-
կուշաբթի երկուց Գաղղիացի զոյցած ժամա-
նակ հետեւեալ ցաւալի գեղարդ պատահեր է :
—Կոմսը ին և Վարայ-Պոլսի միջանգլի
անցած ատենը ճամբորդներն մէկը պատահ-
մամբ ծովն ինկեր, և լողալ դիմապուր հա-
մար լողալ սիսեր է : Նաւագետն անմիջապէս
կայնեցուցեր է շողենուր : պարսն ձգուել
է որպէս զի անով վեր հանուի. ցարտին
պատճառաւ խեղճ հացի փաթեթներ է պար-
տանին բայց շողենուրն չթմանց մտակցած
տանը պարտնը ձեռքն ստիչելով դարձեալ
ծովն ինկեր է : այս գործողութիւնը 9-10
անգամ կատարուելով անհար է եղեր մար-
դը շողենուրն ստեալ, և ամենուր ուրքին
ասլե պիտի դիմանանուց եղեր, եթէ՛ նաւակ
մը վայ համեմելով խեղճը կիտակու վիճակի
մէջ չապակ եղեր : Աւելորդ է բնութիւն՝ այս
փրկութեան ճշմանց միջոցին ս'ըջափ մեծ եւ
լրաց է շողենուր գանուորներու յուզումըն
ու սարսափը :

—Պ. Կիլի պաշարման առն կու-
ռապարութիւնը հասարակաց քով գըռ-
նուած կենդանիները գրաւելով հասար-
ակաց կերցուցեր է : Սակայն 7000 ի չափ
կառավար կենդանիներ եւ մեծամեծայ
ձիւր մնացած ըլլալով, վերջին օրերս
զանեք ալ առեր է, միայն բժշկաց ձի-
ներ թողլով :

—Գոնսթանթինոյի Նամ Բուս դա-
ղթմանըն ախն ախաւթի շրջարարը
ըլ իրավէսինաէ շաւթիաէքի վազաս
միւնատրիս ախ :

Պէյոզլունաս իւշ նէֆեր Բրուսի-
այըլար պիր ֆրանսըլ լոգանթարնա
կիրտերէք, պիր էյամ օրասա պու-
լունան ֆրանսըլար իլէ էյլէնիպ
վաղթի կէյիտիքան սոնրա, լո-
գանթաճրանս իւշ առէթ ֆարէ ալը-
մասը իսթէրլէք, լոգանթաճր իսթ
պիր եերտէն անինաէ իւշ թանէ ֆա-
րէ պուլուրուպ իսթէտիքլէր թա-
մուր եարար վէ էոնլէրինէ կէթիլլիւր.
Բրուսիայըլար պունու կէօրաիւքան իս-
թիւշաքեարի սուրէթաէ պաշարըլ
թաւանս պէհանէլէք պուլմայ, կիւ-
զէլ բիւլմէմիլ ախ, իարթ սըր, եէն-
մէզ, վէ սայիրէ կիպի լաֆըլար սեյ-
լէլէրէք. լոգանթաճր պուլունան
Ֆրանսըլար իսթ, պունլարըն մայ-
թապ իտիպ էյլէնիքան օլուուլա-
րընը ֆարդը ա վարըլ. Իւզէրլէրի-
նէ հիւճմ իլէ լայըլը վէճհ իւզրէ
պունլարա պիր սայագ աթարար, վէ
Բրուսիայըլար կիւճ իլէ Ֆրանսըլա-
րըն էյլէրինաէն դուրթուրուպ ֆիրար
իսթերէք, սոլլուճա Բրուսիա սէֆա-
րէթ իսանէսինէ կիտիպ, ապագ եէ-
աիքլէրինի դոնսօլա ճէնապլէրինէ
պէյան իտիլէք, վէ գոնսօլա տախի
վուգուաթը թահդըլ իտիլէք, Բը-
րուսիայըլարըն հազդըլ օլուուլա-
րընը պիլալիլը, վէ պէյլէլիլը մէզ-
քիւր է իւշ Բրուսիայըլար եէաիքլէրի
սաւազ եանլարընսա քեար դալա-
րագ, աղըլարընը սիլիպ կէրույն տէօն-
միւշլէր ախ : « Պու վուգուաթա իւշ
ֆարէ դաւաթ վուգու պուլմուշ սուր :
Որք »

Երեւելի Եղեմարտի մը

Խոսողիւղ բնակող մեր ազդայիններէն մէկը գործի մը պատճառաւ իզմիր երթալու համար ասկէջ ամիս մը յառաջ շողենաւ կմանէ : Ճամբան ստակով խողի կնատին քանի մը ճամբորդներու հետ հոն գտնուող տանիկ մ'ալ ասոնց կխառնըվի : Եւ ամենայն անտարբերութեամբ 30-40 եւ աւելի լիրաներ փկորոնցունէ : Խոսողիւղցին զարմանալով անոր այս փրճակին վրայ , ներս մ' կկնդրէ եւ հետաքրքրութեամբ կհարցունէ՝ ո՞վ ըլլալը : աստիկը կըսէ թէ՛ ինքը Եղեմարտի իշխանական երեւելի ընտանեաց մ'որդի է . թէ՛ ամսական 1300 սակի եկամուտ ունի , բայց ձեռքը շատ բայ ըլլալուն համար բնատնիքը միայն 500 սակի կուտան իրեն . թէ՛ պատրաստ է յօժարակամ 2000 սակի ընծայել ով որ կրնայ զինքը Եղեմարտ բնակեցունելու : հրաման հանել , ուսկից արտաքուտած է իշխանութեան կողմանէ ինչպէս ուրիշ շատ մը երեւելի անձինք . թէ՛ իւր մօրեղբոր որդին է Ֆազիլ Մուսթաֆա փաշան , հօրեղբայրն է Գեամիլ փաշան , եւ այլն . եւ թէ՛ իզմիր պիտի հանդիպի , եւ հոն այս անուն վաճառականին քանի մ'օր հիւրըլլալէն յետոյ՝ Իսկէնտէրուն պիտի երթայ : Տաճկին սուլթան այս եւ ուրիշ մանրամասն տեղեկութիւններուն վրայ մեր Խոսողիւղցին հաւատքը բաւական մեծ կըլլայ , եւ շողենաւը իզմիր կհասնի : Կեննեն : Տաճկը կուղէ զատուիլ , բայց չեն թողուր , եւ կկնդրեն իրենց ընկերանալ ու մէկտեղ օթեւանիլ : Կհասնի բարձրագատիւ իշխանորդին : Շատ չանցնի , բարձր քաղաքին մէջ Նորին բարձրագատութեան գալստեան համբաւը կտարածուի , առիւթն անդիէն թանկագին վաճառքներ կնեկայացունեն . մէկն ալ 300 սակի արժէք ունեցող մատանի մը կըբրէ եւ կկնդրէ որ քովը պահէ ու քննել տայ : Իշխանորդին հետեւեալ օրը ամենայն վեհանձնութեամբ տիրոջը կըարձուեն մատանին « չկրցայ աղէկ մը հասկնալ » ըսելով . ասոր վրայ ատէրը կաղաչէ , որ դարձեալ քովը մնայ մատանին եւ կատարեալ յըննութիւն մ'ընել տայ : Աս կերթայ :

Նոյն օրը Նորին բարձրագատութեան թիւնը իւր ողջամբ հասնիլը ծանուցանող հեռագրեր կուղղէ Ֆազիլ Մուսթաֆա փաշային , Գեամիլ փաշային , այս անուն պէյլին , այս անուն էֆէնտիին , եւ այլն : Կիմանայ Խոսողիւղցին :

Խոսողիւղցին պէտք կըլլայ 85 սակի փոխանակաւիր մը հանել Պոլիս : Մարդ չգտնէր : Այս դէպքն ալ իշխանորդին կիմանայ , եւ ընկերտիրութենէ մարդասիրութենէ եւ ուրիշ շատ մը դիւցազնական բարեմասնութիւններէ շարժեալ , Պալթաճի խանը այս անուն անձին վրայ փոխանակաւիր մը կուտայ , եւ նոյն օրն ալ 85 սակի խօսք ամենեւին չընէր : Խոսողիւղցին ուրախ կըլլայ , եւ փառք կուտայ Աստուծոյ որ այսպիսի ընկեր մը չնորհեց իրեն :

Ստակով խաղ խաղալը այժմ մանաւանդ մեծամեծաց համար սովորական

գրտանք մ'ըլլալով , իշխանորդին կանցնի սեղանի մը գլուխ՝ կհրաւիրէ խոսողիւղցին եւ ընկերն ալ : Կուտայ կառնէ , բայց սուսաճը շատ կըլլայ ի մեծ գոհութիւն իւր սեղանակցաց : Այս միջոցին Խոսողիւղցին կըսէ որ իրեն համար 20 սակի տայ , քիչ մ'ետքք 10 , պահ մ'ալ անցնելէն յետոյ 30 , եւ այլն : Խոսողին վերջ կը տրուի եւ կպառնին ամեն վեհանձնութիւն ու ժանրութիւն անկորոշուտ :

Իշխանորդին հետեւեալ օրը գործով մը գուրու ելած կըլլայ , երբ մատանիին տէրը կուղայ , կպատէ որ գայ . ժամեր կանցնին բայց եկող գայող չըլլար . միայն թէ նոյն միջոցին մեր Խոսողիւղցին Պոլսէն պատասխան կուգայ թէ Պոլսէն իսն սյնպիսի մարդ չկայ եւ փոխանակաւիրն ստորագրութիւնը բոլորովին անձանօթ է . ասոր վրայ Խոսողիւղցին ալ կհարկադրի սպասել մատանիին տիրոջը հետ , որովհետեւ առջի օրը 80 էն աւելի լիրա խաղի ատեն փոխ սուսաճ էր : Գիշերուան մութը կուղայ փոխանակ իշխանորդին : Հետեւաբար հիւրամեծար Խոսողիւղցին կհասկնայ թէ՛ խաղէութեան իշխան մ'էր նա , եւ թէ՛ կծկիլը դրած է ուրիշ աթու փնտուելու համար : Մատանին տիրոջն ալ կհաղբուրէ իւր այս գիւտը : Քաղաքը տակնուվրայ կըլլայ , բայց չգտնուիր իշխանորդի իշխանը :

Օրեր կանցնին : Իսկէնտէրունէն շողենաւ կուղայ : Աւանդաբերին ալ հարցուփորձ ըրած ատեն կտեսնեն որ մատանին անոր մասն է . իտէրն իշխանութեան կմանեն , որով կիմացուի թէ այնպիսի անձ մը իսկէնտէրուն երթալով 60 սակի ծախսեր է մատանին , եւ աւանդաբերը թէ եւ մատանի առնելու անկարող բայց նկատելով որ 300 սակի չափ արժէք ունի՝ քովը գտնուած աւանդէ մը 60 սակի հաներ ու աւեր է զայն , յետոյ ծախելու եւ աւանդը ամբողջացունելու խորհրդով : Մատանին առնուեր է խեղճէն , առանց միտ դնելու աղաչանայն ու արտասուաց , վասն զի 60 սակին վճարելու անկարող ըլլալով իւր հաւատարմութեան պատուը բոլորովին պիտի կորսուի :

Այսպէս , մատանին իւր տիրոջը կը դառնայ Պ եւ մեր Խոսողիւղցին ալ իւր գործը ընցունելէն յետոյ՝ Պոլիս կգառնայ , զարմացած ոչ այնչափ կորուսած լիրաներուն այլ առաւել իշխանորդի իշխանին կերթ ու փորձ ճարտարութեան վրայ , որով յաղթանակեր է իրեն :

Իշխանորդին , մայրաքաղաքէն շողենաւ մտած օրը , ոստիկանութեան բանտէն նոր արձակուած է ելեր :

Փարիզացոց նոր ծոյան

Փարիզի պաշարման ժամանակ , փարիզացիք չիրնալով հանդերձի եւ ուրիշ պայտիսի բաներու նորածեւութեամբ պարասիլ , հետեւեալ մտան հնարեր են՝ պաշարման օրերը երկարելէն յետոյ : Հաշուաբէտ մարդիկ նկատելով որ սուսաճը եւ խաղիլը նշուողութեան պատճառաւ շատերը սկսած են

նիհարանալ . - հետեւին մէկ մէկ ի նորձ ստանալով սրեր եւ տեղ տեղ մարդ կընել ամեն օր , ե յատուկ տեսարաններու մէջ նշանակել . սա՛ պայմանաւ որ պաշարու մը վերահալէն ե խողաղութիւնը հաստատուելէն յետոյ՝ դարձեալ կընեն ե ո՛րչափ աւելցած ըլլալին ինացունեն :

Այս մտան շատերուն հաճելի եւ ընդունելի ըլլալով՝ հեղինակներուն համար մեծ շահու գուռ մը բացեր է :

Փարիզացոց այս գործը լսողը չիրնալ իւր գարնանը բռնել , մտածելով թէ նկողութեան ու պաշարման վիճակի մէջ գտնուող անձինք ինչ սրտով խանդարի սակ կմտնեն ու կկուտին , մինչդեռ պարտաւոր են ամեն կարողութիւն ու զոհողութիւն ի կշիռ դնել իրենց հոյրենեաց փրկութեան ե իրենց անձանց պաշտութեան համար :

Անցեալները Գաղղիոյ տիկնայք ալ մտաւ մը հնարեցին , բայց չթէ իրենց հասցից այլ ցուրտի ու բռնի քէ՛մ մերկ մնացող թշուազօրաց պիտոյից համար : Հրատարակեցին որ տարեկան իրենց զրկուած ընծաները գուրպաներու ե կոշիկներու մէջ գրուած ըլլան , կամ բոլորովին գուրպա ու կոշիկ ըլլան ընծաներն : Այսպէս շատ մը գուրպա ու կոշիկ ծաղվեցաւ յե շատ մը պիտուորակներ վրիթարուեցան :

Այս վերջին ու սուսաճին մտաներուն մէջ ո՛րչափ տարբերութիւն գտնուիր կրնայ դասել օրօրոցի տղեկն անգամ :

Քումէլի երկաթուղոյն բաժնետուներուն վեցերորդ վիճակահանութեան գործողութիւնը կատարուելով շորեքշաբթի օրը արքունի փողերանոցին մէջ հետեւեալ արդիւնքն ունեցաւ :

Թ. 4499247	(300000 ֆրանգ)
» 900614	(25000 »)
» 4290274	(10000 »)
» 4638476	(10000 »)
2000ական ֆրանգ վաստկողները	
46211 249831 804077	
46214 281417 4782347	
1250ական ֆրանգ վաստկողները	
492243 406043 4257804 4383959	
247473 613534 4257803 4419348	
281449 830290 4289300 4499250	
1000ական ֆրանգ վաստկողները	
46213 272855 654848 4169454	
400510 406041 685431 4230425	
474425 406044 734777 4256303	
484280 483107 908860 4289298	
492242 500052 924643 4479860	
492243 500055 924644 4499246	
272854 613533 4086524 4782349	

Արամեան մամէն , մեծ ու փոքր տարեցոյցներ , ներկայ 187A տարույս համար , ընտիր տպագրութեամբ ի լոյս ընծայեալ , կծախուին մայրաքաղաքիս գրավաճառաց խանութները : Մեծին մէջ , տարեցոյցն զատ , շատ մը ուրիշ տեղեկութիւններ ալ կգանտին՝ որոնք ամեն կարգի ազգայնոց համար ալ կըրնան օգտակար ըլլալ :

ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԷՐ
Հ. Ս. Ա. Ա. ՃԱՃԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Կ. ՊՕԼԻՍ ԶԻՆՄՊՈՒԼԼԻԻ ԽԱՆ ՎԵՐԻ
ՅԱՐԿ ԹԻԻ 24